ռեն կկանխեն պատերազմը, կապահովեն անվտանգությունը և կբարձրացնեն աշխարհի բոլոր ժողովուրդների բարեկեցությունը։

8. Մենք ուշադրություն ենք հրավիրում այն բանի վրա, որ մի շարք երկրների կողմից ռազմական էկոնոմիկայի անցնելն ավելի և ավելի ուժեղ կերպով է խախտում երկրների միջև տնտեսական կապը և ինչպես հումքի, այնպես էլ արդյունաբերության արտադրանքի փոխանակումը կործանարար ազդեցություն է թողնում շատ ժողովուրդների կենսամակարդակի վրա, արգելակում է տնտեսական պրոգրեսն ու գործարար համագործակցությունը բոլոր երկրների միջև և վերջին հաշվով խաղաղության գործի նկատմամբ սպառնալիք ներկայացնող կոնֆլիկտների աղբյուր է հանդիսանում։ Ելնելով բոլոր երկրների բնակչության կենսական շահերից, ձգտելով առողջացնել միջազգային իրադրությունը, մենք առաջարկում ենք վերականգնել տարբեր երկրների միջև առևտրական նորմալ հարաբերությունները՝ փոխադարձաբար օգտավետ պայմաններով, որոնք ապահովեն ժողովուրդների պահանջները, բացառեն տնտեսական խտրականությունը իր բոլոր արտահայտություններով, ապահովեն ազգային էկոնոմիկայի զարգացումն ու մեծ և փոքր պետությունների տնտեսական զարգացումը։

9. Գտնելով, որ ժողովուրդների միջև կուլտուրական կապերի խախտումը նրանց անջատում է իրարից, առաջ է բերում փոխըմբռնման կորուստ, ստեղծում է փոխադարձ անվստահության իրադրություն ու նպաստում է պատերազմի պրոպագանդային և որ, մյուս կողմից, ժողովուրդների միջև կուլտուրական կապերի ամրապնդումը պայմաններ է ստեղծում հանուն խաղաղության մղվող ընդհանուր պայքարում փոխըմբռնման ու վստահության համար, մենք դիմում ենք բոլոր կառավարություններին՝ կոչ անելով նպաստել ժողովուրդների միջև կուլտուրական կապերի բարելավմանը, ժողովուրդների կուլտուրական վիճակի փոխադարձ ուսումնասիրմանը։ Մենք առաջարկում ենք նպաստել կուլտուրայի գործիչների միջազգային կոնֆերանսների կազմակերպմանը, նրանց կողմից այլ երկրները այցելելուն, այլ երկրների գրականության լայն հրատարակմանն ու նրանց արվեստի հետ ծանոթանալուն։

10. Միավորված Ազգերի Կազմակերպությանը կոչ անելով արդարացնել այն հույսերը, որ ժողովուրդները դրել են նրա վրա, նրան հայտնում ենք ի գիտություն, որ մենք հիմնել ենք Խաղաղության Համաշխարհային Խորհուրդ, որը կհանդիսանա ներկայացուցչական օրգան՝ իր կազմում ունենալով աշխարհի բոլոր ժողովուրդների, ինչպես Միավորված Ազգերի Կազմակերպության մեջ մտնող, այնպես էլ այնտեղ չներկայացված երկրների ժողովուրդների ներկայացուցիչներին, ներառյալ նաև այն երկրների ժողովուրդները, որոնք այժմ դեռևս կախյալ և գաղութային երկրներ են։

Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը Միավորված Ազգերի Կազմակերպությանը կոչ կանի գործնականում կատարել բոլոր երկրների միջև խաղաղ համագործակցության ամրապնդման ու զարգացման գծով իր ստանձնած պարտավորությունները։ Նա իր վրա կվերցնի մի վսեմ խնդիր՝ ապահովելու կայուն ու երկարատև խաղաղությունը, որը համապատասխանում է բոլոր ժողովուրդների կենսական շահերին։ Խաղաղության Համաշխարհային Խորհուրդը վստահություն կներշնչի մարդկությանը, որ հակառակ գոյություն ունեցող դժվարություններին, որոնք չի կարելի թերագնահատել, նա կկատարի իր ստանձնած միսիան։

ԿՈՆԳՐԵՍԻ ԲԱՆԱՁԵՎԸ ՌԵՊՐԵՍԻԱՆԵՐԻ ԶՈՀԵՐԻ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շատ երկրներում խաղաղության կողմնակիցները ներկայումս ենթարկվում են ոստիկանական հալածանքների։

Լատինական Ամերիկայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում, Աֆրիկայի ու Մերձավոր Արևելքի զանազան երկրներում խաղաղության հազարավոր կողմնակիցներ բանտարկված են։

Նրանցից շատերը, ովքեր ընտրվել էին այս կոնգրեսի դելեգատներ, չեն կարող ներկա լինել նրան։

Խաղաղության պաշտպանության ժողովներն արգելված են։ Ոստիկանությունը կրակում է խաղաղության կողմնակիցների վրա, ծեծի է ենթարկում նրանց։

Հալածանքներից չեն խուսափել նաև գիտնականները։

Խաղաղության Համաշխարհային երկրորդ կոնգրեսը ողջունում է ոստիկանական տե-

ռորի ենթարկվող խաղաղության կողմնակիցներին և վճռականապես բողոքում է նրանց հալածելու դեմ։

Կոնգրեսը պահանջում է անհապաղ ազատել ոստիկանական տեռորի բոլոր զոհերին։ Կոնգրեսը կոչ է անում ամբողջ աշխարհի ժողովուրդներին իրենց համերաշխությունը հայտնել խաղաղության ազնիվ կողմնակիցներին, ձգտել, որպեսզի նրանք ազատվեն, աջակցել և պաշտպանել բոլոր նրանց, ովքեր պայքարում են ամբողջ աշխարհում խաղաղության համար։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՇՆՈՐՀՈՒՄ

Վարշավայում, նոյեմբերի 22-ին, Լենական պետական թատրոնում տեղի ունեցավ խաղաղության միջազգային մրցանակների շնորհման արարողությունը։ Մրցանակներ շնորհվեցին արվեստի և գրականության այն երկերի համար, որոնք նպաստել են խաղաղության համար մղվող պայքարին։ Արարողությանը ներկա էին խաղաղության կողմնակիցների Համաշխարհային երկրորդ կոնգրեսի աշխատանքին մասնակցող բոլոր դելեգացիաների ներկայացուցիչները, Լենհատանի ղեկավար գործիչները՝ սեյմի մարշալ Կովալտկու և մինիստրների խորհրդի նախագահ Ցիրանկևիչի գլխավորությամբ, Վարշավայի հասարակայնության ներկայացուցիչները և աշխատանքի առաջավորներ։

Ժյուրիի հաղորդագրության հրապարակումից հետո տեղի ունեցավ համերգ։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՇՆՈՐՀՈՂ ԺՅՈՒՐԻԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Խաղաղության միջազգային մրցանակներ շնորհող ժյուրին նիստեր է ունեցել Պրագայում 1950 թվականի օգոստոսի 19-ից մինչև 28-ը և իր վերջին նիստը անց է կացրել Վարշավայում։

Ժյուրին քննարկել է խաղաղության կողմնակիցների ազգային կոմիտեների ընտրած 110 աշխատություն և առանձին անձանց ներկայացրած 6 աշխատություն։

Ժյուրին միաձայն հավանություն է տվել և խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսի Մշտական կոմիտեին է հանձնել հետևյալ առաջարկությունները.

1. Խաղաղության պատվավոր մրցանակը բացառության կարգով շնորհել չեխոսլովակյան նահատակված գրող Յուլիուս Ֆուչիկին, մահապատժից առաջ նրա գրած «Ռեպորտաժ՝ օղակը պարանոցին» գրքի համար։

2. Գրականության ասպարեզում խաղաղության միջազգային մրցանակ շնորհել Պաբլո Ներուդային՝ նրա «Թող արթնանա անտառահատը» պոեմի համար և բանաստեղծ Նազիմ Հիքմեթին։

3. Արվեստի ասպարեզում խաղաղության միջազգային մրցանակ շնորհել Պաբլո Պիկասոյին, «Խաղաղության աղավնի» նրա առաջին նկարի համար և Պոլ Ռոբսոնին՝ «Խաղաղության երգեր»ի համար։

4. Կինոյի ասպարեզում խաղաղության միջազգային մրցանակ շնորհել Վանդա Յակուբովսկայային՝ «Վերջին էտապը» ֆիլմի համար և Օվանեսովային, Կիշին, Բոբրովին, Բեսարաբովին, Կասպիային, Սոլոգուբովին, Իլլեշին՝ «Աշխարհի պատանեկությունը» սովետա-հունգարական ֆիլմի համար։

Ժյուրիի կանոնադրության 7-րդ հոդվածի կանոններին համապատասխան՝ խաղաղության Ոսկե մեդալ շնորհել.

Գրականության ասպարեզում Լիբանանի «Ադ-Դարիդ» ժուռնալին, Ժան Ռիշար Բլոկին՝ «Օկուպացված Ֆրանսիայից դեպի զինված Ֆրանսիա» գրքի, Միխայիլ Սադովյանուին՝ «Միտրյա Կոկոր» գրքի համար։

Արվեստի ասպարեզում՝ նկարիչ Ռենատո Գուտտուզոյին՝ «Աստված մեզ հետ է» ալբոմի և նկարիչ Կանդիդո Պորտինարիին՝ «Տիրադենտես» որմանկարի, չեխ երաժիշտ Վացլավ Դոբիաշին՝ «Կառուցում ես հայրենիքդ, ամրապնդում ես խաղաղությունը» կանտատայի համար։

Կինոյի ասպարեզում՝ Լուի Դակենին՝ «Ճակատամարտ կյանքի համար» ֆիլմի համար։

Կոմիտեի ներկայացմամբ ժյուրին Ոսկե մեդալ է շնորհում «Վարշավայի վերականգնումը» ցուցահանդեսին։